

բաբախեր եւ այնպէս բռնուած անշարժ մնացի. մինչեւ տեսայ, որ տխուր՝ լուր մտածութեանց մէջ թաղուած, գլուխը ծռած, առանց իմանալու դէպ ինձ սկսաւ գալ. իր ալդ տխրութիւնը՝ ալդ ցաւագին վիճակը ինձ զօրութիւն մը տուին, եւ երբ մօտեցաւ՝ զիս տեսաւ նստած անշարժ, հազիւ թէ՝ «Կը ներեք, Օրիորդ, ձեզ անհանգիստ կ'ընեմ» ըսելով ետ քաշուելու եղաւ. ես զինք քաջալերեցի եւ հրաւիրեցի քովս նստարանին վրայ նստիլ. իբրեւ թէ վախելով քովս նստաւ. շփոթած էր բոլորովին, չէր համարձակեր բերան բանալու, կարծես կը դողար, եւ սրտին բաբախմունքը կը լսէի. զարմանալի բան, ես հանդարտած էի ալս վայրկենին եւ սկսայ հետը խօսիլ. նա միավանկ բառերով կը պատասխաներ, իր մօրը վրայ խօսեցայ, գիտէի ինչպէ՛ս կը սիրեր. թէ անշուշտ ինչպէս իրեն երթալու անհամբեր էր. «Ո՛հ, պատասխանեց, ես իմ մայրս շատ կը սիրեմ, բայց ինք նաեւ զիս շատ կը սիրէ»։ Ես ալս ատեն ըսի. «Միթէ կարելի՞ է սիրել առանց սիրուելու»։— «Ո՛Յ գիտէ,— ըսաւ,— կարելի է, կան ալնպիսի թշուառ անձինք, որ կը սիրեն եւ չեն գիտեր թէ կը սիրուի՞ն փոխադարձ»։— «Այդ անկարելի է,— ըսի ես քաջութեամբ»։— «Ինչպէ՛ս անկարելի, ես կը խոստովանիմ, որ ոչ թէ կը սիրեմ՝ այլ կը պաշտեմ անձ մը, որ եթէ զիս սիրե՛ր՝ կեանքս կ'ուտայի»։— «Անկարելի, որ ձեզի պէս երիտասարդ մը երբ սիրե՛ չի սիրուի,— պատասխանեցի ես։ Ես ինչ երկալն ընեմ, նա՛ ես երկուքս էլ խոստովանեցանք թէ իրար կը սիրենք...

Եւ հեկեկանքը դարձեալ խօսքը դադրեցուցին։ Իսկ ծեր գինուորը շրթունքն ամփոփած՝ մէկ ձեռքով Թենիի ձեռքը բռնած, միւսը ծնօտին դրած, ուշ կ'ուտար այս խօսակցութեան զարմանքով, այս սիրոյ լեզուն, այս զգացմունքը իրեն համար նոր էին, առաջին անգամն էր, որ կենաց մէջ այսպիսի պատմութիւն մէկն իրեն կ'ըներ. միտքը բոլորովին իւր հարազատ աղջկան Թենիին գնացեր էր, որ գրեթէ այս Թենիին տարիքն ուներ, եւ որ սիրոյ զոհ լինիլն երեւակայէր էր, եւ զոհարար ինքն էր. ուստի երբ պատմութեան հեկեկանքը փոխանակեց՝

— Թենի, որդեակ Թենի,— ըսաւ,— վերջը ի՞նչ եղաւ, ինձմէ բան մը մի պահէր, դու պէտք է գիտնաս, որ ես միայն քեզի համար կապրիմ այս անիծեալ աշխարհքիս մէջ, քեզմով եւ քեզի համար միայն աստուած իմ մեղացս պիտի ներէ, եւ այնպէս կը հաւտամ, որ այն օրը հոգիս պիտի առնու, երբ զքեզ երջանիկ ինձ ցոյց տա՝ նշան իմ մեղացս թողութեան. ուստի մի՛ լար, զրուցէ ինձ համարձակ, եթէ յանցանք մը նաեւ կայ՝ ինձմէ մի՛ քաշուիր, շարունակէ՛։

— Ի՞նչ յանցանք, հայրիկ, մենք այն գիշերը խօսք տուինք իրարու, որ ուրիշին չլինինք մահ նաեւ եթէ հասնի. մեր ապագայ երջանկութեան վրայ խօսեցանք, ինք խօսք տուաւ, որ երթայ մօրը իմացնէ մեր սերը եւ զիս հարսնութեան ուզէ։